1. Օրենսդրական զարգացումների մոնիտորինգ

Գնումների համակարգի պաշտոնական www.gnumner.am կայքում տեղադրվել է պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի գնահատման կարգը, տեղի են ունեցել Էլ. ուղեցույցի կազմման մասով լրացումներ, օրինակելի ձևերում կատարվել են որոշ փոփոխություններ[1]: Այնուհանդերձ հիմնական փոփոխությունը դա գնումների մասին օրենքի նոր նախագծի առկայություն է,[2] որի մասով ԹԻՀԿ ներկայացրել է իր կարծիքը: Այս մասով նախատեսվում է ավելի մասնակցային հանրային քննարկում:

Ի լրումն ԹԻՀԿ կողմից նախորդ հաշվետվություններում նշված այդ թվում նաև օրենսդրական հիմնախնդիրների կից ներկայացնում ենք որոշները, որոնք բնութագրական են տվյալ ժամանակաշրջանին:

“Սև ցուցակում” ընդգրկված սուբյեկտները մասնակցում են պետգնումներին, այսինքն այս գործիքն արդյունավետության բարձրացման խնդիր ունի: Օրինակ՝ Սիթի Պետրոլ Գրուպ ՍՊԸ-ն 2015թ. հոկտեմբերի 8-ին ներառվել է սև ցուցակում: Օրենսդրության տրամաբանական բացը շրջանցելու նպատակով պետգնումներին մասնակցում է ՔաղՊետրոլՍերվիս Ա/Կ-ն ով նախկինում էր ընդգրկված սև ցուցակում: Նույն տրամաբանությունն է գործում մի շարք այլ սուբյեկտների պարագայում, օրինակ՝ Ֆ/Ա Աննա Աղաջանյանին ընդգրկել էր գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող սուբյեկտների ցանկում: Արգելքը շրջանցելու նպատակով ստեղծվել է Աննա Աղաջանյան Հայրապետի Ա/Ձ-ն[3]: **Առաջարկվում է արգելքը տարածել հիմնադիրների նկատմամբ, այլապես սև ցուցակը ֆորմալ բնույթ է կրում:**

ԹԻՀԿ պարբերաբար բարձրաձայնում է **ապրանքահումքային բորսաներից գնումներ իրականացնելու** իր առաջարկը կենսագործելու մասին: Օրինակ՝ միայն ՇՀ համատեքստում բենզինի և սննդամթերքի մասով ԹԻՀԿ առաջարկի կենսագործման պարագայում, եթե ենթադրենք, որ հնարավոր էր միջնորդավորված գնումների փոխարեն այդ ապրանքները ուղղակիորեն ձեռք բերել առնվազն մեկ տոկոսային կետով պակաս, ապա հնարավոր կլիներ տնտեսել մոտ 275 մլն դրամ: **Առնվազն պետք է գործոնային պայմանագրեր կնքել, հաշվի առնելով դոլար դրամը հարաբերակցությունը, միջազգային բորսաներում գները և այլն:**

Բացի այդ ԹԻՀԿ առաջարկել էր, որ պետք է միջոցառումներ ձեռնարկել ԵԱՏՄ գնումների միասնական պորտալի ստեղծման և օֆշորային ընկերությունների վերջնական բենեֆիցիարների բացահայտման ուղղությամբ:

Ներկա մոնիտորինգային ծրագրի շրջանակներում ԹԻՀԿ ընտրանքային կարգով ուսումնասիրում է նաև Համաշխարհային Բանկի (ՀԲ) Կրթության բարելավում ծրագրում իրականացված մրցույթները: Ներկայումս միջանկյալ գնահատումների համատեքստում պետք է նշել, որ արտառոց է, որ ՀՀ կառավարությունը, դրամաշնորհների տեսքով առանց մրցույթի /տես **Նկար 1** և **2**/, արդեն ավելի քան 6 տարի պայմանագրեր է կնքում «Այ Փի Էս Սի» ՍՊԸ-ի հետ /տես **Հավելված 1**/: Սույն խնդրին որոշակիորեն անդրադարձ կա նաև ՁԼՄ-ում:[4] Պետք է նշել, որ ՀԲ կրթության բարելավում ծրագրում «Այ Փի Էս Սի» ՍՊԸ դիտարկվող ժամանակահատվածում մասնակցել է 2 մրցույթների, որոնցից և ոչ մեկում հաղթող չի ճանաչվել /տես **Հավելված 2**/:

Հասկանալի է, որ մրցակցային ուղղություններում ոչ մրցակցային սկզբունքների կիրառությունը ռիսկային մոտեցում է, ուստի առաջարկում ենք դադարեցնել ՀՀ կառավարության կողմից մրցակցային ուղղություններում դրամաշնորհների տեսքով առանց մրցույթի գումարներ հատկացնելու պրակտիկան:

[1] Տես՝ http://gnumner.am/download/168696.html http://gnumner.am/download/174274.html http://gnumner.am/download/172814.html
[2] http://gnumner.am/am/category/17/1.html
[3] https://www.e-register.am/am/companies/1030383
[4] https://www.youtube.com/watch?v=EQUsmY4_Rrc&feature=share

2. Էլեկտրոնային գնումների համակարգ

Էլեկտրոնային գնումների համակարգում գրանցված տնտեսական օպերատորների տեսակարար կշիռը 3 տոկոսից էլ ցածր է:[5] Էլ. գնումների համակարգով հայտարարվել է 2930 ընթացակարգ, որից տարբեր պատճառներով լուծարվել է 633-ը (22%): Ի դեպ համակարգի միջոցով կայացած 2297 ընթացակարգը կազմում են ընդհանուրի մոտ (9%): Չնայած ԹԻՀԿ էլ. գնումների նախկինում բարձրաձայնել էր հիմնախնդիրներ, որից հետո էլ. գնումների սպասարկման ու բարելավման նպատակով պայմանագիր էր կնքվել Այյունեթվորքս ՍՊԸ[6]-ի հետ (ավելի քան 1 մլրդ դրամ գումարով), սակայն ԹԻՀԿ ուսումնասիրությունը փաստում է, որ խնդիրները գրեթե նույնությամբ մնացել են: Ստորև ներկայացված է թերությունների որոշ օրինակներ:

1) Գնահատման հաշվետվությունը անգլերեն լեզվով փաստաթուղթ է և այն ամբողջությամբ հասկանալի չէ հայ օգտվողներին: Փաստաթուղթն իր մեջ չի ներառում նաև հիմնավորումներ մերժումների համար, որը սահմանված է ՀՀ օրենքով:
2) Ոչ բոլոր դեպքերում են մրցութային հայտարարությունների փաստաթղթերը ստորագրված և կնքված, ինչը չի բացառում, որ դրանք փոփոխության ենթարկվեն:
3) Հայկական դրամը բացակայում է «Estimated cost of contract» դաշտից /տես Հավելված 1/:
4) Էլ. գնումների համակարգը ենթադրում է, որ տնտեսական օպերատորները պետք է տեղյակ լինեն գնահատման ողջ գործընթացից, ինչը նշանակում է, որ նրանք պետք է ավտոմատ ծանուցվեն գնահատողի յուրաքանչյուր քայլի մասին: Ուսումնասիրությունը փաստում է, որ նշված մոտեցումը չի գործում:
5) Էլ. գնումների համակարգը հակասում է գնումների մասին օրենքին, օրինակ կոնսորցիումի պայմանագրի մասով համակարգում ոչինչ առկա չէ:
6) Armeps համակարգում խախտված է միևնույն մրցույթին մեկից ավել հայտ ներկայացնելու հնարավորությունը: Օրինակ՝ մեկ մասնակից կարող է միանգամից մի քանի հայտեր ուղարկել, ինչը էական թերացում է, ինչը կարող է խաթարել ողջ ընթացքը:[7]

ԱՄՓՈՓՈՒՄ: Էլեկտրոնային եղանակով գնումներ կատարելու համար ներդրված համակարգը դեռևս լիարժեք չի ապահովում գործընթացի անխափան իրականացումը ու հեռու է կայացած համարվելուց: Ըստ այդմ, էլ. գնումների համակարգի միջոցով խնդիրների լուծման պետական պաշտոնյաների պնդումներն որևէ պատշաճ հիմք չունեն: Ավելին, առանց վերոնշյալ խնդիրների լուծման էլ. գնումների իրականացումը անտրամաբանական է:

3. Շրջանակային համաձայնագրերի մոնիտորինգ

Նախորդ հրապարակման մեջ ուսումնասիրվել էին մինչև 2015թ. հոկտեմբեր ամիս իրականացված շրջանակային համաձայնագրերով (ՇՀ) կատարված գնումները, որի համատեքստում բարձրաձայնվել էին ոստիկանության կասկածելի ձեռքբերումներ /ալկոտեստեր և այլն/: Սույն հրապարակման մեջ փորձել ենք ներկայացնել 2015թ. նոյեմբեր - 2016թ փետրվար ժամանակահատվածում ՇՀ-ով կատարած գնումների հիմնական բնութագիչները /Տես **Հավելված 3**/: **ՇՀ-ով կատարված ուսումնասիրության արդյունքները փաստում են, որ ՇՀ վիճակագրությունը թերի է մուտքագրվում: Բացի այդ, առկա է հաղթողների միջինից բարձր կենտրոնացվածություն, իսկ պետական գնումները գրավիչ չեն նոր "խաղացողների" համար:**

5 Էլեկտրոնային գնումների համակարգում գրանցվածների թիվը 2.6%, ավելի քան 166 հազարից է 4418
6 https://www.e-register.am/am/companies/1034683
7 Էլ. գնումների համակարգի սույն վերլուծությունն իրականացնելու համար օգտագործվել են ԳԱԿ-ի ուսումնասիրության արդյունքները:

4. Թիրախային ոլորտների ուսումնասիրություն

Ա) ՊՈԱԿ-ների ֆինանսավորում

Հաշվի առնելով այն, որ ՊՈԱԿ-ների ֆինանսավորման հարցերը որևէ ամփոփ ուսումնասիրության չեն ենթարկվել մենք նպատակադրվել ենք լրացնել այդ բացը: Ուսումնասիրության համար հիմք են ծառայել https://www.e-gov.am/poak/ խորագրի ներքո 2010-2016թթ. ներբեռնված տվյալները:[8]

Ըստ www.e-gov.am կայքի տվյալների, 2016թ. 14 պատվիրատուների կողմից կնքվել է 42 պայմանագիր, որի արդյունքում գեներացվել է ավելի քան 6 մլրդ դրամ պարտավորություն: ՊՈԱԿ-ների կողմից իրականացված ծառայությունները փորձել ենք խմբավորել ըստ ուղղությունների /տես **Աղյուսակ 1**/:

Աղյուսակ 1. ՊՈԱԿ-ների կողմից իրականացվելիք ծառայությունների կառուցվածքը 2016

ՊՈԱԿ-ի կատարած ծախսային ուղղությունը	Մլն դրամ
Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանություն, որից	**857**
Ձիկատար պետական արգելոցի պահպանություն	15
Զանգեզուր կենսոլորտային համալիր	136
Արգելոցապարկային համալիր ՊՈԱԿ	134
Արփի լիճ ազգային պարկ	43
Դիլիջան ազգային պարկի պահպանության	137
Խոսրովի անտառ պետական արգելոցի պահպանություն	121
Սևան ազգային պարկի պահպանություն	269
Թանգարանային, թատերական և գրադարանային ծառայություններ, որից	**275**
ՀՀ Գեղարքունիքի մարզի Լ.Քալանթարի անվ. դրամատիկական թատրոն ՊՈԱԿ	50
Հայաստանի բնության պետական թանգարան ՊՈԱԿ	43
Գավառի երկագիտական թանգարան ՊՈԱԿ	17
Նորամուծության եւ ձեռներեցության ազգային կենտրոն ՊՈԱԿ	147
Պարույր Սևակի տուն-թանգարան ՊՈԱԿ	7
Սպարապետ Վ. Սարգսյանի տուն-թանգարան ՊՈԱԿ	10
Վերապատրաստման և ուսուցման ծառայություններ	**1320**
Ուսումնամեթոդական կենտրոն ՊՈԱԿ	11
Աշտարակի մարզադպրոց ՊՈԱԿ	24
Արդարադատության ակադեմիա ՊՈԱԿ	318
Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն ՊՈԱԿ	24
ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ ՊՈԱԿ	345
ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոց ՊՈԱԿ	44
Ուսուցման կենտրոն ՊՈԱԿ	110
Գնումների աջակցման կենտրոն ՊՈԱԿ	157
ՊԵԿ	306
Տեքստերի թարգմանչական աշխատանքներ	**409**
ՀՀ ԱՆ թարգմանությունների կենտրոն ՊՈԱԿ	217
Տեղեկատվության և վերլուծության կենտրոն ՊՈԱԿ[9]	191
Մոնիտորինգի, փորձաքննության, տեղեկությունների հավաքագրման և պատվաստման ծառայություններ, այդ թվում	**3115**

[8] 2010-2014թթ տվյալները ուսումնասիրությունը սույն հրապարակման մեջ չի ներառվել ծավալային առումներով, սակայն ներկայացված կլինի ավարտական հաշվետվությունում:

[9] ՀՀ կառավարության ինտերնետ կայքի խմբագրական կազմակերպական աշխատանքները և նյութերի թարգմանությունը, ՀՀ կառավարության գործունեությունը լուսաբանող "Հրապարակում" հեռուստածրագրի պատրաստումը, պաշտոնական միջոցառումների նկարահանումն ու արխիվացումը, ՁԼՄ մոնիտորինգը, հասարակություն-կառավարություն կապի ապահովումը ՁԼՄ-ների և սոցցանցերի հրապարակումներով:

Հանրային գնումների տեղեկագիր, թողարկում II

Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ	236
Թափոնների ուսումնասիրության կենտրոն ՊՈԱԿ	16
Հիդրոերկրաբանական մոնիտորինգի կենտրոն ՊՈԱԿ	45
Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն ՊՈԱԿ	45
Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն ՊՈԱԿ	161
Տեղեկատվական վերլուծական կենտրոն ՊՈԱԿ[10]	20
Ագրոքիմիական ծառայություն ՊՈԱԿ	71
Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն ՊՈԱԿ	756
Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն ՊՈԱԿ	55
Հայանտառ ՊՈԱԿ	1201
Սերմերի գործակալություն ՊՈԱԿ	59
Հանրապետական երկրաբանական ֆոնդ ՊՈԱԿ	20
Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն ՊՈԱԿ	348
Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն ՊՈԱԿ	80
Այլ ծառայություններ	**558**
Հավատարմագրման ազգային մարմին ՊՈԱԿ	14
ՀՀ կառավարության աշխատակազմին ամրացված շենքերի և այլ գույքի սպասարկում	387

Ըստ պատվիրատուների, ՊՈԱԿ-ների ֆինանսավորումը կունենա հետևյալ կառուցվածքը /տես **Աղյուսակ 2**/:

Աղյուսակ 2

ՊՈԱԿ-ներին գումար փոխանցած պատվիրատուն	**Պայմանագրերի գումարը, մլն դրամ**	**Պայմանագրերի քանակը, հատ**
Գյուղ նախ	2142	6
Բն. նախ.	1189	13
Արդարադատ. նախ.	1141	6
Կառավարության աշխատակազմ	736	3
Սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն	348	1
ՊԵԿ	306	1
ՖՆ	190	2
Էկոն. նախ.	160	2
Գեղարքունիքի մարզպ.	68	2
ԱԳՆ	44	1
Արագածոտնի մարզպ.	24	1
Էներգետիկայի եւ բն. պաշարների նախ.	20	1
Արարատի մարզպ.	18	2
Անշարժ գույք և կադաստր	11	1
Ընդամենը	6397	42

ՊՈԱԿ-ների ուսումնասիրությունը վեր է հանում մի շարք ռիսկեր: Օրինակ՝ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն 2016թ փետրվարի 22-ին 11.2 մլն դրամի պայմանագիր է կնքել <<Ուսումնամեթոդական կենտրոն>> ՊՈԱԿ-ի հետ՝ Մասնագետների ու աշխատակիցների վերապատրաստման, մասնագիտական

[10] Բնապահպանական ոլորտի գծով տեղեկատվական վերլուծական ծառայություններ

որակավորման բարձրացման, տեղեկատվական-վերլուծական նյութերի պատրաստման ծառայությունների մատուցման վերաբերյալ:

Պայմանագրի ուսումնասիրությունը չի պատասխանում հետևյալ հարցերին

Ա) Որքա՞ն մարդու ուսուցում է իրականացվելու /նաև բացակայում են արդյունավետության չափողականության չափանիշները/:

Բ) Ինչո՞ւ չեն օգտագործվում վերապատրաստման պետական կարողությունները /ֆինանսների նախարարության ուսումնական կենտրոն, Գնումների աջակցման կենտրոն, Քաղաքացիական ծառայության խորհուրդ/:

Գ) Ինչո՞ւ չի կարելի գնման գործընթացն իրականացնել մրցակցային հիմունքներով: Արդյո՞ք նույն նպատակով չեն տրվել դրամաշնորհներ, ինչի չի կարելի դրանք թվայնացնել օգտագործելով նաև հասարակական կազմակերպությունների ներուժը /Տես **Հավելված 4**/:

2015թ. 19 պատվիրատուների կողմից ՊՈԱԿ-ի հետ կնքվել են 147 պայմանագրեր, որի արդյունքով պետությունը վճարել է 15 մլրդ դրամ: Հարկ է նշել, որ լրացուցիչ բացատրությունների կարիք կա ինչպես շահառու/սպասարկող անձնակազմի հարաբերակցության, այնպես էլ յուրաքանչյուր խնամվողին հատկացվող գումարի մասով: Այս մասով դեռևս 2010թ ՄԱԿ-ի կողմից համալիր գնահատվել են ու բարձրաձայնվել են ֆինանսավորման հետ կապված հիմնախնդիրներ, որոնք ինչպես ցույց են տալիս մեր մոնիտորինգի արդյունքները մնում են արդիական:[11]

Առանձնակի ուշադրության ու լրացուցիչ բացատրությունների կարիք ունի ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի հետ կնքված ավելի քան 4.6 մլրդ դրամի պայմանագրերը, ինչը առնվազն ներկա ժամանակաշրջանում պետք է ամբողջովին ուղղել միայն ռազմական ուսումնասիրությունների իրականացմանը:

Աղյուսակ 3

ՊՈԱԿ-ներին գումար փոխանցած պատվիրատուն	Պայմանագրերի գումարը, մլն դրամ	Պայմանագրերի քանակը, հատ
Գիտությունների Ազգային Ակադեմիա	4653	42
ԿԳՆ	4024	39
Գյուղ նախ.	2169	8
Բն. նախ.	1175	13
Կառավարության աշխատակազմ	985	3
Առողջ. նախ.	613	6
Մենդամթերքի անվտանգության պետական ծառայություն	404	2
Արդարադատ. նախ.	356	3
Անշարժ գույք և կադաստր	300	9
Էկոն. նախ.	159	2
Գեղարքունիքի մարզպ.	82	3
Մշակույթի նախ.	120	5
ԱԳՆ	36	1
Արագածոտնի մարզպ.	18	1
ՀՀ նախագահի աշխատակազմ	40	4
Արարատի մարզպ.	17	2
Էներգետիկայի եւ բն. պաշարների նախ.	13	1
ՏԿՆ	12	1
Կոտայքի մարզպետարան	5	2
Ընդամենը	**15185**	**147**

[11] http://www.unicef.org/armenia/Costing_Residential_Care_Institutions_in_Armenia_report_eng.pdf

Հանրային գնումների տեղեկագիր, թողարկում II
Ըստ պատվիրատուների ՊՈԱԿ-ների ֆինանսավորումը կունենա հետևյալ կառուցվածքը /տես **Աղյուսակ 4**/:

Աղյուսակ 4

Պայմանագրի առարկան	Պայմանագրերի գումարը, մլն դրամ
Քարտեզագրություն և գեոդեզիական աշխատանքների իրականացում	**299**
Առողջապահական ծառայություններ՝	**545**
«Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ	387
«Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ	59
«Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ	62
«Ա. Բ. Ալեքսանյանի անվ. Համաճարակաբան., վիրուսաբան. և բժշկ. մակաբուծաբանության ԳՀԻ» ՊՈԱԿ	35
«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ	5
Գյուղատնտեսական ծառայություններ՝	**1228**
«Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ	728.6
«Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ	31.7
«Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ	58.9
«Հանրապետական անասնաբուժասանիտար. և բուսասանիտար. լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ	339
«Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ	70
Թանգարանային, թատերական և գրադարանային ծառայություններ, որից՝	**466**
Թանգարանային ծառայություններ՝	**70**
«Պարույր Սևակի տուն-թանգարան» ՊՈԱԿ	7.5
«Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ	44
«Գավառի երկագիտական թանգարան» ՊՈԱԿ	17.6
Թատերական ներկայացումներ և մշակութային միջոցառումներ՝	**55**
«ՀՀ Գեղարքունիքի մարզի Լ.Քալանթարի անվ. դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ	50
«Կոտայքի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ	4.6
Գրադարանային ծառայություններ՝	**342**
«Հանրապետական գիտաբժշկական գրադարան» ՊՈԱԿ	62.8
«Նորամուծության եւ ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ	145.6
«Հիմնարար գիտական գրադարան» ՊՈԱԿ	133
Պատմամշակութային ծրագրերի իրականացում	**1294**
Պահպանման ծառայություններ, որից՝	**3444**
Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանություն՝	**2051**
«Արփի լիճ» ազգային պարկ ՊՈԱԿ	41.6
«Զիկատար» բնապահպանական կենտրոն ՊՈԱԿ	15.5
«Հայանտառ» ՊՈԱԿ	1201
«Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ	137
«Զանգեզուր» կենսոլորտային համալիր ՊՈԱԿ	132
«Խոսրովի անտառ» պետական արգելոց ՊՈԱԿ	120
«Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ	267
«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ	134
Թանգարանների պահպանում՝	**115**
«Սպարապետ Վ. Սարգսյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ	10
«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ	104.8
Գիտական և գիտատեխնիկական գործունեության	**1278**

ենթակառուցվածքի պահպանում և զարգացում, որից՝	
«Երկրագործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ	24
«Բժշկակենսաբանական միջազգային հետբուհական ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ	35
«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» ՊՈԱԿ	8
«Արվեստի ինստիտուտ» ՊՈԱԿ	73
«Բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ	120
«Գ. Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ	51
«Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ	99
«Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ» ՊՈԱԿ	76.6
«Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ» ՊՈԱԿ	59
«Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ» ՊՈԱԿ	138.5
«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ	198.9
«Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ	247.6
«Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ	80.9
«Մենդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ	64.7
Վերապատրաստման և ուսուցման ծառայություններ	**61**
«Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ	24.9
«ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոց» ՊՈԱԿ	36
Կրթական ծառայություններ և ծրագրերի իրականացում, որից	**3450**
Նպաստների և կրթաթոշակների տրամադրում	**2766**
Արտադպրոցական կրթություն	**549**
Այլ կրթական ծրագրեր	**134**
Տեքստերի թարգմանչական աշխատանքներ՝	
«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ	185.9
Մոնիտորինգի, գնահատման և տեղեկությունների հավաքագրման ծառայություններ, այդ թվում՝	**855**
«Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ	16
«Հիդրոերկրաբանական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ	44
«Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ	154
«Տեղեկատվական վերլուծական կենտրոն» ՊՈԱԿ	211.7
«Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ	54.5
«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ	44.5
«Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ	15
«Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ	168
«Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ	145.6
Գիտական հետազոտությունների և ծրագրերի իրականացում , այդ թվում՝	**2504**
«Ա. Նազարյանի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ	93.9
«Ակադեմիկոս Լ. Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ» ՊՈԱԿ	123.7
«Բյուրականի աստղադիտարան» ՊՈԱԿ	220
«Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ	225.6
«Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ	142

Հանրային գնումների տեղեկագիր, թողարկում II

«Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտ» ՊՈԱԿ	169.9
«Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն ՊՈԱԿ	265
«Մ. Գ. Մանվելյանի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ» ՊՈԱԿ	109
«Մաթեմատիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ	70.8
«Մեխանիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ	153
«Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ	164.8
«Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ	170.5
«Քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ	99
«Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» ՊՈԱԿ	294.5
«Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ	173
«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ	27.6
Այլ ծառայություններ.	**830.9**
«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ	13
«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ	12
«Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ	416.9
«Սպասարկում» ՊՈԱԿ	377
«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ	10

ՊՈԱԿ-ների ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվության թափանցիկության հետ կապված հիմնախնդիրներ

2015թ. պետական բյուջեից ֆինանսավորված որոշ ՊՈԱԿ-եր արտացոլված չեն: Օրինակ, առնվազն հետևյալ 27 ՊՈԱԿ-ներ չնայած ֆինանսավորվել են սակայն պորտալում այդ մասին տեղեկությունները բացակայում են: Այդ ՊՈԱԿներն են Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն, Տրանսպորտային փոխադրումներ, Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն, Սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության հանրապետական կենտրոն, Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն, Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն, Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն, Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախումբ, Երևանի կամերային պետական թատրոն, Փաստավավերագրական ֆիլմերի Հայկ կինոստուդիա, Գրքի և հրատարակչական գործի կենտրոն, Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն, Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն, Երևանի Չայկովսկու անվան միջնակարգ մասնագիտական երաժշտական դպրոց, Հակոբ Կոջոյան կրթահամալիր, Ձորակ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն, Միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն, Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ, Վանաձորի մանկատուն, Գավառի մանկատուն, Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն, Հաշմանդամների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքային վերականգնողական կենտրոն, Հատուկ կացարան, Հանգրվան, Համակարգչային կենտրոն, Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ, Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ և այլն:

Առաջարկներ

- **Բարձրացնել վերապատրաստման և ուսուցման ծառայությունների արդյունավետությունը: Մասնավորապես, դրանք մեկտեղել մեկ հարթակում /հնարավորություն կտա տնտեսել մարդկային և այլ ռեսուրսներ/, օրինակ Պետական Կառավարման Ակադեմիայի ներքո: Միջոցառումներ ձեռնարկել առցանց և հեռավար ուսուցման մոդուլներ պատրաստելու համար, ինչն էականորեն կմեծացնի տվյալ ենթաուղղության ծախսային արդյունավետությունը:**
- **Անշարժ գույքի վարձակալությունը իրականացնել կենտրոնացված պետական մարմնի կողմից:**
- **Հիմնախնդիրներ ավելացնել տրված գումարների համար հաշվետվողականության պահանջ, օրինակ տարվա համար նախատեսվում է 290 աշակերտի համար մարզական ծառայություններ, կցել դրանք ամրապնդող հիմքերը:**

- **Թարգմանչական ծառայությունները պետք է կամ կենտրոնացվեն կամ ամբողջովին ապակենտրոնացվեն: Ներկայումս դրանք իբր թե 0 տոկոս շահույթով են իրականացվում, սակայն միանշանակ չէ, որ այդպես ավելի թանկ է ստացվում:**
- **Լուծել հանրային տեղեկատվության թափանցիկության հետ մատնանշված հիմնախնդիրները**

5. Մեկ անձից գնումներ

2016թ. համար www.e-gov.am կայքի մեկ անձից գնումների բաժնում առկա տվյալների ուսումնասիրությունը փաստում է, որ ներբեռնված են 5200 պայմանագրեր, որոնց հանրագումարը կազմում է ավելի քան 92 մլրդ դրամ: Շարունակվել են անարդյունավետ գնումները, մասնավորապես ԱԺ ծաղիկներ և այլն:
Մեկ անձի հիմքով խոշորագույն 20 գնումները ներկայացված են **Աղյուսակ 5**-ում:

Աղյուսակ 5

Ընտրված մասնակից	Պայմանագրային գինը, մլն դրամ	Պայմանագրերի թիվ
«ՀԷՑ» ՓԲԸ	5,811	241
«Հայփոստ» ՓԲԸ	4,213	91
«Հայռուսգազարդ» ՓԲԸ	2,766	112
«Նատալի ֆարմ» ՍՊԸ	1,273	14
«Սահակյանշին» ՓԲԸ	914	6
«Ռադվան տեխնոլոգիա» ՍՊԸ	675	1
«Արմենիա տելեֆոն կոմպանի» ՓԲԸ	662	210
«Երևան ջուր» ՓԲԸ	578	84
«Հայջրմուղկոյուզի» ՓԲԸ	293	59
«Երևանշին» ՍՊԸ	264	1
«Յուքոմ» ՍՊԸ	263	67
«Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ	255	2
«Արեմպա Ինթերնեշնլ» ՍՊԸ ՖՁԵ	234	1
«Գոհարիկ» ՍՊԸ	198	1
«Հանարդնախագիծ» ԲԲԸ	168	3
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ	143	1
«Ախտահանման Կենտրոն» ՓԲԸ	117	2
«Նաիրի ինշուրանս» ԱՍՊԸ	114	36
«Տոյոտա Երևան» ՍՊԸ	82	24
«ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ	75	1

Ամենից հաճախ մեկ անձի հիմքով պայմանագրեր կնքված ընկերությունների տասնյակը ներկայացված է **Աղյուսակ 6**-ում:

Աղյուսակ 6

Ընտրված մասնակից	Պայմանագրերի թիվ	Պայմ գինը, մլն դրամ
«ՀԷՑ» ՓԲԸ	241	5811
«Արմենիա տելեֆոն կոմպանի» ՓԲԸ	210	662
«Հայռուսգազարդ» ՓԲԸ	112	2766
«Հայփոստ» ՓԲԸ	91	4213

«Երևան ջուր» ՓԲԸ	84	579
«Յուքոմ» ՍՊԸ	67	263
«Հայջրմուղկոյուզի» ՓԲԸ	59	294
«Ավիատուր Գրուպ» ՍՊԸ	50	33
«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ	50	16
«Ինգո Արմենիա» ԱՓԲԸ	46	33

Դիտարկվող ժամանակահատվածում մեկ անձ կնքած հիմնական 10 սուբյեկտները ներկայացված են **Աղյուսակ 7**-ում:

Աղյուսակ 7

Մեկ անձ իրականացրած պատվիրատուն	Պայմանագրային գումարը, մլն դրամ	Մեկ անձի պայմանագրերի քանակը
ՀՀ առողջապահության նախարարություն	70,898	2771
ՀՀ ՊՆ	5,385	66
ՀՀ ԱՍՀՆ	4341	171
ՀՀ ոստիկանություն	2205	181
ՖՆ	1899	90
ԱԱԾ	1050	74
ՀՀ դատական դեպարտամենտ	660	210
ՀՀ քաղշին նախ.	349	57
ՀՀ կառ. աշխատակազմ	261	37
Պետ. Գույքի կառ. վարչություն	240	23

Անհրաժեշտ է նշել, որ քանի որ օբյեկտիվ պայմանագրերը /կոմունալ, առողջապահություն, կրթություն, հեռահաղորդակցություն և այլն/ կնքվում են տարեսկզբին ներկայացված պատկերը ավելի դրական է, քան իրականությունը: Դա է պատճառը, որ մկե անձի հիմքով հիմնականում օբյեկտիվ ձեռքբերումներ են իրականացվել /սակայն դրանց մեջ էլ կան անարդյունավետներ և ռիսկայիններ/, սակայն առկա են որոշ մեկ անձի պայմանագրեր, որոնք բավական ռիսկային են թվում և կներկայացվեն:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Էլ. գնումների համակարգում բացակայում է ՀՀ արժույթը



Հավելված 2

Մրցույթ 1 Հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման կարիքների գնահատման իրականացում[12]
Գնման հիմքը՝ գնումների պլան PP-20.07.2015 /Consultancy, line 1.4.1/
Կարճ ցանկում ընդգրկված խորհրդատուների ցանկը՝

1. <<Ի-վի Քոնսալթինգ>> ՓԲԸ
2., <<Այ Փի Էս Սի>> Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ, ՍՊԸ
3. Կաունասի տեխնոլոգիական համալսարան

Հայտ ներկայացրած կազմակերպությունը	Ստացած միավորները
«Ի-Վի Քոնսալթինգ» ՓԲԸ և <<Այբ>> կրթական հիմնադրամ	97.4
<<Այ Փի Էս Սի>> Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ, ՍՊԸ	92.8
Կաունասի տեխնոլոգիական համալսարան	86.6

Պայմանագրի շնորհում: <<Ի-վի Քոնսալթինգ>> ՓԲԸ-ն <<Այբ>> կրթական հիմնադրամի հետ համատեղ, Պայմանագիր No 17/15 – 37 401 600 ՀՀ դրամ,

Մրցույթ 2
Գնման մեթոդ – Կազմակերպության որակավորման վրա հիմնված ընտրություն (CQS)
Հաջորդը դա հարցումների իրականացման համար մրցույթն է, որտեղ նոյեմբեր ամսին հաղթող է ճանաչվել Բեյքեր Թիլլի Արմենիա ՓԲԸ-ն է, որը հաղթող է ճանաչվել 70235 հազ. Դրամ արժեքով:[13] Պետք է նշել, որ դիմել են ևս 2 մասնակից: Նրանց ստացած միավորները ներկայացված են ստորև:

Հայտ ներկայացրած կազմակերպությունը	Ստացած միավորները
«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ	98
«Ի-Վի Քոնսալթինգ» ՓԲԸ	96.5
«Այ Փի Էս Սի» ՍՊԸ	88.3

[12] http://cfep.am/Tender_No03_CQ_2015
[13] http://cfep.am/Tender_No04_CQ_2015

Հավելված 3

	նոյ			դեկտ			Հունվ			Փետրվար		
Ցուցանիշներ	Ապրանք	Ծառ.	Աշխ.	Ապրանք	Ծառ.	Աշխ.	Ապրանք	Ծառ.	Աշխ.	Ապրանք	Ծառ.	Աշխ.
Կնքված պայմանագրերի թիվը, հատ	270	55	24	348	230	54	197	143	44	423	201	27
Պետության գեներացրած պարտավորությունները, մլն դրամ	355	85	40	959	1573	4624	3229	464	2002	1695	1748	112
Հաղթող ճանաչված ընկերությունների թիվը	44	32	13	40	35	34	29	22	26	61	32	11
Հաղթողների գումարային կենտրոնացվածությունը ըստ Հերֆինդահլ-Հիրշմանի համաթվի	882	1443	3713	2051	1604	450	2856	1944	1218	1631	1884	2084
Հաղթողների քանակային կենտրոնացվածությունը ըստ Հերֆինդահլ-Հիրշմանի համաթվի	1101	427	1076	729	1988	473	1327	890	650	760	1717	2208
Հաղթողների կենտրոնացվածությունը ըստ մրցույթների գումարի, c3	42	53	89%	69%	69%	23%	91%	63%	23%	61%	64%	70%
Հաղթողների կենտրոնացվածությունը ըստ մրցույթների քանակի, c3	53	23	46%	39%	59%	28%	58%	42%	27%	36%	63%	70%
Հաղթողների կենտրոնացվածությունը ըստ մրցույթների գումարի, c5	57	67	97%	81%	86%	35%	96%	78%	35%	76%	81%	94%
Հաղթողների կենտրոնացվածությունը ըստ մրցույթների քանակի, c5	64	35	58%	53%	76%	37%	70%	58%	37%	49%	76%	78%
Պայմանագրեր կնքած պատվիրատուների քանակը	16	11	4	20	14	14	21	19	8	29	21	6
Պատվիրատուների քանակային կենտրոնացվածությունը ըստ Հերֆինդահլ-Հիրշմանի համաթվի	1966	3710	3923	1819	4640	7332	1888	2682	2727	1147	4082	2675
Պատվիրատուների գումարային կենտրոնացվածությունը ըստ Հերֆինդահլ-Հիրշմանի համաթվի	1845	3539	6883	2321	3358	9966	4678	1787	6093	1746	3135	8267
Պատվիրատուների կենտրոնացվածությունը ըստ մրցույթների գումարի, c3	61%	82%	99%	76%	87%	100%	95%	66%	53%	66%	84%	96%
Պատվիրատուների կենտրոնացվածությունը ըստ մրցույթների քանակի, c3	66%	76%	96%	63%	88%	96.3	60%	70%	31%	46%	76%	84%
Պատվիրատուների կենտրոնացվածությունը ըստ մրցույթների գումարի, c5	835	96%		85%	95%	-	97%	83%	65%	83%	93%	100%
Պատվիրատուների կենտրոնացվածությունը ըստ մրցույթների քանակի, c5	78%	88%		80%	93%	-	77%	82%	41%	62%	84%	96%
Կենտրոնացվածության գնահատականը	Միջին	Միջին	միջին	Միջին	Բարձր	ցածր	Բարձր	Բարձր	Ցածր	Միջին	Բարձր	Բարձր

Հավելված 4. Ռիսկեր պարունակող գնման գործընթացի օրինակ

Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և <<Ուսումնամեթոդական կենտրոն>> ՊՈԱԿ-ի միջև կնքված պայմանագրում նշվում է, որ ուսուցումը իրականացվելու է հետևյալ 4 խումբ աշխատողների համար, տես **Աղյուսակ 8**:

Աղյուսակ 8

I խումբ	II խումբ	III Խումբ	IV խումբ
Անշարժ գույքի ռեգիստրներ,	Հաշվառման տվյալների մուտքագրման բաժինների մասնագետներ,	Սպասարկման գրասենյակի աշխատակիցներ (մասնագետներ և օպերատորներ),	Ֆինանսատնտեսագիտական վարչության մասնագետներ,
Արխիվի աշխատակիցներ,	Հաշվառման և հողաշինարարության վարչության մասնագետներ,	Սպասարկման գրասենյակների համակարգման վարչության մասնագետներ,	Գնումների, միջազգային կապերի, որակավորման, անձնակազմի կառավարման, տեղեկատվության և հասարակության հետ կապերի բաժինների և ներքին աուդիտի վարչության մասնագետներ:
Սպասարկման գրասենյակի խորհրդատուներ,	Անշարժ գույքի կադաստրային գնահատման և համակարգված դիտարկումների վարչության մասնագետներ,	Ընդհանուր բաժնի մասնագետներ,	
Իրավաբաններ,	Կոմիտեի համակարգի գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտի մասնագետներ[14]		
Գրանցման և վերահսկողության վարչությունների մասնագետներ,			
Գեոդեզիայի և հողային պետական տեսչության մասնագետներ,			
Տեղեկատվական կենտրոն ստորաբաժանման աշխատակիցներ /մասնագետներ և օպերատորներ			

Պարզաբանում պահանջող հարցեր

Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման ժամկետ է սահմանվել ապրիլ-դեկտեմբերը: Ինչ հրատապություն է եղել, որի պատճառով չէին կիրառվել մրցութային գործընթացների ընթացակարգերը:

Ո՞վ է իրականացնում դասընթացների մոնիտորինգը: Կան դեպքեր երբ նշվում է ու պատվիրատուն հենց ինքն է մոնիտորինգ անում, սակայն հիմնականում չի իրականացվում: Ինչո՞ւ չի կարելի մի հատ կուրս սարքել ու օնլայն տեղադրել:

[14] Ունկնդիրները ըստ մասնագիտական ուղղվածության կծանոթանան Արբանյակային դիրքորոշման կայանի՝ System 1200, Տախոմետրի-TPS 1200+, TPS 300 Թվային նիվելիրի NA3003 և այլ գեոդեզական սարքավորումներից օգտվելու հմտություններին:

Նկար 1



PT87.1_2015page967-992.pdf - Adobe Acrobat Pro

File Edit View Window Help

Create Customize

1 / 26 64.4% Tools Sign Comment

Click on Tools, Sign, and Comment to access additional features.

Հավելված N 1
Աղյուսակ N 16

ՑԱՆԿ

«Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված այն ծրագրերի, որոնց գծով հատկացումների գլխավոր կարգադրիչ հանդիսացող համապատասխան պետական կառավարման մարմինների կողմից այդ հատկացումների գումարները տնտեսավարող սուբյեկտներին տրամադրվելու են դրամաշնորհների տեսքով՝ առանց մրցույթի

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման			Ծախսային ծրագրի անվանումը	Ծախսային ծրագիրը կատարող ՀՀ պետական կառավարման մարմնի անվանումը	Տնտեսավարող սուբյեկտներին տրամադրվող դրամաշնորհի գումարը (հազար դրամ)	Դրամաշնորհ ստացող տնտեսավարող սուբյեկտի անվանումը
Բաժին	Խումբ	Դաս				
1	2	3	4	5	6	7
				ՀՀ կառավարության աշխատակազմ	*1,406,798.8*	
01	01	01	Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության գնահատականների, կանաչի որակի և համալսքային կարիքների գնահատման հետազոտություններ		123,278.0	«ԱԶԳ ՓԻ ԷՍ ԱԻ» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ» ՍՊԸ
08	01	01	Շախմատիստների պատրաստման ծառայություններ		127,666.4	«Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամ
09	06	01	Գնահատման և թեստավորման ծառայություններ		405,342.1	«Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ
09	06	01	Մասնագիտական կրթության որակի ապահովման ծառայություններ		68,230.3	«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ
09	06	01	Աջակցություն արտասահմանում սովորող ուսանողներին		100,000.0	«Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամ
01	03	02	«ՀՀ պետական մարմիններին լիցենզիոն ծրագրային փաթեթներով ապահովում»		582,282.0	«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ

967

Նկար 2.



Հավելված N 1
Աղյուսակ N 16

ՑԱՆԿ

«Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված այն ծրագրերի, որոնց գծով հատկացումների գլխավոր կարգադրիչ հանդիսացող համապատասխան պետական կառավարման մարմինների կողմից այդ հատկացումների գումարները տնտեսվարող սուբյեկտներին տրամադրվելու են դրամաշնորհների տեսքով՝ առանց մրցույթի

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման			Ծախսային ծրագրի անվանումը	Ծախսային ծրագիրը կատարող ՀՀ պետական կառավարման մարմնի անվանումը	Տնտեսվարող սուբյեկտներին տրամադրվող դրամաշնորհի գումարը (հազար դրամ)	Դրամաշնորհ ստացող տնտեսվարող սուբյեկտի անվանումը
Բաժին	Խումբ	Դաս				
1	2	3	4	5	6	7
				ՀՀ կառավարություն աշխատակազմ	*1,099,815.9*	
01	01	01	Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության գնահատականների, կոսմի որակի և համայնքային կարիքների գնահատման հետազոտություններ		107,665.3	«ԱԶԳ ՓԻ ԷՍ ԱԻ» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ» ՍՊԸ
04	01	01	Տնտեսական գործունեության աջակցման ծառայություններ		122,262.9	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ
08	01	01	Շախմատիստների պատրաստման ծառայություններ		285,404.3	«Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամ
09	06	01	Գնահատման և թեստավորման ծառայություններ		416,936.3	«Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ
09	06	01	Մասնագիտական կրթության որակի ապահովման ծառայություններ		67,547.1	«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ

912